գրչութեանս»։ Նոյն թուականին նոյն խօսքերով յիշում է և իւր գրած Աւետարանի յիշատակարանի մէջ*։ Սրանց վերայ պէտք է աւելացնել և Կիրակոս Բանասէր վարդապետի կենսագրականը, ուր գրուատում է իւր վարդապետի գիտնականութեան հետ նաև նորա կեանքի սրբութիւնը, «արդարութեամբ քաղաքավարեալ ի մանկութենէ մինչև ի խորին ծերութեանն»։ Ամենքի խօսքի մէջ, լինի այդ նորա աշակերտների կամ ոչ աշակերտների կողմից, երևում է խորին յարգանքի արտայայտութիւն դէպի նորա անձնաւորութիւնը։

Թող այս փոքրիկ աշխատութիւնն էլ երախտագիտական մի փոքրիկ առհաւատչեայ լինի արդիւնաւոր վարդապետի յիշատակին։

Կիրակոսի «Պատմութիւն մեծի բարունապետին Թումայի» հրատարակում ենք հինգ ձեռագրի համեմատութեամբ։

Ա. № 1705/1768, անթուական, գրուած նօտրգրով, թղթի վերայ, հաւանօրէն ԺԷ. դարու վերջի գործ։ Գրիչն է Յովսէփ աբեղայ և ստացողը «Գօրեցի Բարսեղ ե՞պս ի պայազատ յաղգէն Թումանեցի կոչեցեալ»։ Յիշատակարան 162ա. 289ա. 340բ. 357ա.

Բ. № 1706/1769, անվարժ բոլորգրով, թղթի վերայ, գրուած Յակոբ քահանայի ձեռքով. «ի թվին հա՞յց ռ՞ճժ՞դի. (=1664) եւ յամսեանն յուլիսի ԻԴ. օրն բ՞շթի աւարտ եղաւ (sic) ի դուռն ս՞բ Կաթուղիկէ ա՞ծածնին ի քաղաքն Փայտակարան, որ կոչի Տփխիս». 438բ.

Գ. № 1712/1771. Նօտրգիր, Յովհաննէս Բանասէրի ձեռքով «ի ՌԼԹ (=1590) թվկնիս»։ 272ա։ Մնացածը գրուած է տարբեր նօտրագրով Արիստակէս Խարբերդցու ձեռքով «ի թվին ՌՃ (=1651)։

Դ. № 1697/1899, թղթի վերայ, բոլորգրով։ «Գրեցաւ ի մերում թ՞վկնութ՞ես. Ռ. Ճ և ի ԻԵ (1676) ամին, ձեռամբ տ՞ր Պողոսի Գաւառցոյ», Ամիրդօլու սուրբ Յովհաննէսի վանքում, «Վր՞դնյ մեծի հռետորի Բաղիշեցւոյ վր՞դպի» հրամանով։

Ե. №1703/1486, գրուած թղթի վերայ, նօտրգրով, Ղազար Բանասէր գրչի ձեռքով ՌԽԶ=1597 թուին, իւր հոգևոր եղբօր Տ. Եղիա Բարերդացու ձեռնտուութեամբ. 196բ. 211ա.

---

* Անդ. 194. 195.